ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1

06 ապրիլի 2023

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՍՊՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մարզաշխարհի սիրելի ներկայացուցիչներ, սպորտի երկրպագուներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիս սպորտի միջազգային օրվա առթիվ: Սպորտը բոլոր հասարակություններին միավորող այն հարթակն է, որը չի ճանաչում ազգություն, չունի խտրականություն և սահմանափակումներ: Սպորտը նոր հնարավորությունների սկիզբ է, նոր որակների ձեռքբերման նախապայման՝ ի նպաստ առողջ ապրելակերպի և համընդհանուր համերաշխության: Ինչ խոսք, սպորտը միայն պրոֆեսիոնալ զբաղվածություն չէ, այն կարող է լինել յուրաքանչյուրիս ընտրությունը, յուրաքանչյուրիս առօրյա կյանքի բաղադրիչը՝ ի նպաստ հասարակության առողջ ապրելակերպի: Առանձնակի ուզում եմ շնորհավորել և շնորհակալություն հայտնել մարզաշխարհի մեր երախտավորներին, մեր անհաղթ մարզիկներին: Նրանք իրենց կամքի ու աշխատասիրության շնորհիվ կերտած միջազգային բազում հաղթանակներով հայրենասիրության և հայրենանվեր գործունեության լավագույն օրինակներն են: Նրանց անվամբ ու ջանքերով մեր պետությունը ճանաչելի է դառնում ամբողջ աշխարհին: Մարզաշխարհի բոլոր ներկայացուցիչներին, երկրպագուներին մաղթում եմ քաջառողջություն, կամք ու եռանդ նոր հաղթանակների ճանապարհին: Թո՛ղ հաղթանակները լինեն շարունակական. դրանցով ապրում և ոգևորվում է ամբողջ հայությունը:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ